# Ֆելիքս ԼԵՎՈՆՅԱՆ



Կյանքի 82-րդ տարում վախճանվեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հնագույն եւ վաստակաշատ աշխատողներից մեկը՝ Ֆելիքս Հայկի Լեւոնյանը: Ֆ. Լեւոնյանը ծնվել է 1930թ., ծառայողի ընտանիքում: 1950թ. ավարտել է Երեւանի Ա.Մռավյանի անվան թիվ 25 միջնակարգ դպրոցը: 1951 թ. զորակոչվել է խորհրդային բանակ, ծառայել նավատորմում: 1954 թ. ավագ նավաստի Ֆ.Լեւոնյանը վերադառնում է տուն եւ մինչեւ 1960 թ. աշխատում է ՀԽՍՀ գյուղնախարարության տարբեր կառույցներում:

1960 թ. Ֆ.Լեւոնյանը իր ճակատագիրը կապում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ՝ կադրերի եւ ասպիրանտուրայի բաժնի տեսուչ, ԳԱ նախագահության ռեֆերենտ (խորհրդական), բնության պահպանության խորհրդի քարտուղար: Աշխատանքին զուգընթաց, 1968 թ. ավարտում է Երեւանի գյուղատնտեսության ինստիտուտի խաղողագործության եւ բանջարաբուծության ֆակուլտետը:

1969թ. Ֆ.Լեւոնյանը նշանակվում է ՀՀ գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայի բաժնի վարիչ, վերջին տարիներին՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի ասպիրանտուրայի բաժնի վարիչ: Այդ պաշտոնում նա մնաց մինչեւ կյանքի վերջին օրը: Նրան բախտ վիճակվեց աշխատելու աշխարհահռչակ Վիկտոր Համբարձումյանի անմիջական ղեկավարությամբ, քանզի ասպիրանտական կադրերի ընտրությանը ԳԱ նախագահը վերաբերվում էր մեծագույն խստությամբ եւ բծախնդրությամբ: Նույն վերաբերմունքը պահանջվում էր Ֆելիքս Լեւոնյանից: Եվ, ի պատիվ նրա, նա զարմանալի պատասխանատվությամբ էր վերաբերվում մի գործի, որը Հայաստանի գիտական ապագա ներուժի դարբնոցն էր: Ամբողջ 43 տարի Ֆելիքս Լեւոնյանը ընտրում, ընդունում եւ պատրաստում էր ապագա ասպիրանտների գործերը՝ զարմանալի բարյացակամությամբ եւ բարեխղճությամբ: Այսօր հանրապետության հարյուրավոր գիտության դոկտորներ, գիտության թեկնածուներ հաջողության առաջին մաղթանքը ստացել են Ֆ. Լեւոնյանի շուրթերից:

Ֆ.Լեւոնյանին բնորոշ էին անսահման աշխատասիրությունը, պատասխանատվությունն ու նվիրվածությունը իր գործին: Նա հրաշալի անձնավորություն էր, պետական ծառայողի տիպար, լավ ամուսին էր, սիրող հայր եւ պապիկ, փնտրված գործընկեր եւ պարզապես մարդ:

Ֆելիքս Լեւոնյանի հիշատակը երկար կապրի Հայաստանի հարյուրավոր գիտնականների, իր գործընկերների եւ բոլոր ճանաչողների սրտերում:

Մեր անկեղծ ցավակցությունը Ֆելիքս Լեւոնյանի ընտանիքին՝ ծանր եւ անսփոփ կորստի կապակցությամբ:

*ՀՀ ԳԱԱ նախագահություն*

*ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն*